



10 ՓՈՐՈՅ

ՕՐԱԹԵՐԹ

10 ՓՈՐՈՅ

Հայրենի առեւ օր կը հրատարակուի րաբեկան քինն է Պօլսոյ և քաաաաայ համար վեց արժանի մեծեր կանիել . քաաաաական իրաարարաններն ձաիւր մեր կայ ե: Վեցամեայ քաաաաաարդ աւ կընդաաաաան: Լրաբայ վերաբերեալ քեր կա՛մ նաակ պետք է աղղէլ աա Տեր Խօքաբեր Մ. Յ. Մեխեան Պաղը Ուն ճաար տեի Թիւ 20 Տ. ճիւղեկեան եֆեհարի րաարանը: Խօքաբարանն աղղեալ քեր եաւ ըս արաւեր: Ծանոցման րաղը մի անգամ համար 3 րը է աաւել անգամ ամար սակարկանիւն կըլլայ:

ԱԶԳԱՅԻՆ

ՕՐՈՒՈՆ ԽՆԴԻՐՆ

(Շարունակութեան երեկէ թեւեւ)

1869 թուականին, ժողովուրդը շերմաբար կը փափաքէր տեսնել յաթոռ Պատրիարքութեան ի Պօլսոյ անմահ յիշատակաց արժանի Տեղապահ Արիստակէս սրբազանը . որ չէր ընդունած կեանալ իրեն առաջարկեալ այն վայրը, որ գերապայծառ Հասունէն վար էր: Անուանին Ալի փաշա սրտմտեցաւ: Ուստի Արիստակէս սրբազան զրկուեցաւ Պատրիարքութենէ. բայց իւր գործողութեան անմահացաւ: Այն ատեն ալ ըսուեցաւ թէ, օրինաց պահանջումն էր այդ, զոր եթէ Արիստակէս սրբազան անտարբերութեամբ կամ զանազան երկիւղներով ընդունէր, աղգային արժանապատուութեան դէմ գործած պիտի ըլլար և պատմական արատ մը պիտի թողար:

Նոյն թուականին, ժողովրդեան ընտրելին էր նաեւ Յարութիւն սրբազան, արդի Պատրիարքը: Սակայն ասոր նկատմամբ ալ դիտողութիւն եղաւ: Գաղղիոյ դեսպանին սրտմտութիւնը կար ասոր դէմ, քանզի Հինձքի եղեռնագործութեան դէպքին մէջ կարնոյ առաջնորդ Յարութիւն սրբազան այնքան հաստատամտ և լուրջ վարուեցաւ, որ նոյն ժամանակի Գաղղիոյ բարձր աղդեցութեանն հակառակ, Պապական վարդապետին եղեռնագործութիւնն հաստատել և զնա բանտարկել տուաւ:

Նոյն ժամանակի խառն ժողովոյ ատենին մէջ Բ. Դրան Հայ պաշտօնատար մը յայտարարած եւ արձանագրել իսկ տուած է թէ դիտողութիւն կայ այդ երկու սրբազան եպիսկոպոսաց վերայ, եւ ապա Պատրիարքը ընտրուեցաւ խրիմեան սրբազան, որ նոյնպէս ժողովրդեան ընտրելաց մին էր: Թէեւ ասոր վրայ ալ Ալի փաշա դիտողութիւն ըրած էր, բայց պատասխան ընդունած էր թէ, նա բանաստեղծ է. եւ առաջարկողին վրայ եղած մտահոլութեամբը անտես եղաւ անոր նկատմամբ կեցած դիտողութիւնը:

Ոչ ապաքէն վերջին անգամ կատարուած պատրիարքական ընտրութիւնը երկար եւ մանրասէր ընտրութեան ենթարկուեցաւ շնորհիւ այն կարգ մը Հայոց, որք աղգային ընտրութիւն մը խայտառակելու եւ իրենց բանտարկային յաջողութիւնը դիւրելու համար տեսակ տեսակ բարութեանքներ յօրինեցին: Սակայն վեհ. Սուլթանն արգարութեամբ եւ բարեսիրութեամբ վարուեցաւ այն ծանր պարագային մէջ, քննեց եւ տեղեկացաւ ամեն բան, եւ ապա հաստատեց ընտրութիւնը: Պէտք չէ՛ր որ միեւնոյն շնորհն ընէր նաև Ռուսիոյ վեհ. կայսրը: պէտք չէ՛ր որ քրիստոնեայ թագաւորը օրինակ առնուր Մահմետական Սուլթանէն, քննէր եւ հասկնար այն բարութեանքները, զորս անխղճաբար եւ գաղտնածածուկ դիզած էին նախանձորդը շարասիրտ ոմանք, Մեքիսեդեկ

սրբազանի վրայ, եւ հաստատէր անմեղութիւնը. թերեւս միևնոյն անձինք էին այդ շարութեան ձեռնարկողք, որք Յարութիւն Սրբազանին վրայ փորձ մ'ըրած էին յառաջագոյն:

Կարելի չէ հաւատալ թէ ի Սուրբ Էջմիածին, կաթողիկոսական բնտրութեան պահուն, բան մը Ռուսիոյ կամաց հակառակ կարենայ ի գործ դրուիլ: Արդէն Էջմիածնի մէջ Ռուսական պաշտօնեայ մը, լրտես մը կայ, Պրօկուրօր անունով, որ ամեն գործի մէջ մատ ունի. առանց անոր դիտութեան ոչինչ կ'ըլլայ:

Ընտրութեան ժամանակ, Ռուս կառավարութիւնը չբաւականանար Պրօկուրօրով. այլ յատուկ պաշտօնեայ մ'ալ կը զրկէ մասնաւոր հրահանգներով. եւ այս պաշտօնեայն անշուշտ իրեն կըցորդներ ալ կ'ունենայ: Արդ երբ ընտրական խնդրոյն մէջ, քաւածքներն, շարժուածքներն եւ նստուածքներն անգամ այդ երկու պաշտօնեից քննութեան ներքեւ են, որք ընտրութեան սերտանին գլուխը բաղմոյ կաթողիկոսական տեղակալին աջ ու ձախ կողմերը կը բաղմին հոգեւառ հրեշտակի նման, եւ իւրաքանչիւր պատգամաւորի խօսքերն ու շարժումներն անգամ կը զննեն, եւ կը դիտան ամեն բան, մինչեւ իսկ քուէարկութիւնը, որ յայտնի կը կատարուի որպէս զի Տերութեան այդ պաշտօնատարք գիտնան թէ, ով ինչ քուէ տուաւ, — իբր թէ ռուս Մետրապօլի մ'ընտրութիւնը կը կատարուի, — կրնանք

հաւատալ թէ այդ պաշտօնատարք բնաւ ներշնչուած չեն ըներ ընտրելաց մասին, եւ կամ անտարբեր կը մնան Ռուսիոյ անհաճոյ ընտրելոյ մասին. և Հայ պատգամաւորք կրնան համարձակիլ յայտնի քուէ տալ, ի ներկայութեան այդ պաշտօնատարաց, Ռուսիոյ անհաճոյ անձի մը:

Ռեբան Մեքիսեդեկ սրբազանի վրայ ու է դիտողութիւն չկար, մինչեւ ապրիլ 21, յորում բոլոր ընտրողաց քուէն ստացաւ Ն. Սրբաղնութիւն և հռչակուեցաւ կաթողիկոս ամենայն Հայոց Համազգ. ընտրողական ժողովէն սկսեալ, բոլոր պաշտօնական մարմինք շնորհաւորեցին զինքը: Աղգերեալի. ժողովը գոհունակութեան քուէ տուաւ, և աշխարհի չորս կողմէն շնորհաւորական հեռագրեր և նամակներ տեղացին: 3 ամիս յետոյ ազգը լսեց թէ Մեքիսեդեկ սրբազան չէ եղեր ազգին կաթողիկոսը, այլ Մակար սրբազան, Ռուսիոյ վեհ. Չարը բարեհաճեր է զնա վաւերացնել Պալատէնիոյ տուած իրաւամբ, այն Պալատէնիոյ որոյ ոգին եւ սկզբունքն է, ընտրական եղանակի մասին, եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորաց համանդամայն մասնակցութեան պէտքը: մինչ Մակար սրբազանին վրայ չկայ և ոչ մի աշխարհական պատգամաւորի քուէն, 7 վիճակաւոր եպիսկոպոսաց հինգն ալ զլացուած են. և միայն վիճակաւոր Սուքիաս եպիսկոպոս քուէ տուած է, և մէյ մ'ալ ինքը՝ Մակար սրբազան՝ իւր անձին հա-

ՉԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ազգային ժողով գումարեցաւ յաթիւս ընդ նախագահու-
մբ Ամեն Ս. Պատրիարք Հօր
առնականութեամբ վսեմ-
առփեան էֆէնտիի :
Յետ վաւերացման ատենադ-
եանց , քաղաքական ժո-
ւտենապետ վսեմափայլ
եան էֆէնտի ծանոյց ժո-
ւտե իջլիածնի կաթո-
սակոն ընտրութեան պաշ-
տարերը հասած են ի Պատ-
րարան , ուստի վարչութիւնը
ընդ Ազգային ժողովէն որ
կարենոր խնդիրը նկատու-
ման առնու համար յա-
տույ որ սրոշուի եւ դռնփակ
գումարի :
Առ առաջարկութեան դէմ
եղան երեսփոխանք ոմանք ,
ընչ պաշտպանեցին :
Այս պահուս վարչութեան Ա-
պետին և երեսփոխանաց ո-
մէջ թիւրիմացութիւն մը
ունենալով , աղմուկ տիրեց

ժողովարանին մէջ , որուն մաս-
նակցեցաւ նաեւ ներկայ ժողո-
վուրդը : Աղմուկը հետզհետէ
սաստկանալով , Ս. Պատրիարք
հայրը ժողովարանէն դուրս ե-
լաւ , որուն հետեւեցան երես-
փոխանք ոմանք : Ատենապետ է-
ֆէնտին պարտաւորեցաւ ատեա-
նը փակել , կէս ժամ վերջը ատ-
եանը վերատին բացուեցաւ , եւ
որոշուեցաւ կաթողիկոսական
խնդրոյն համար դռնփակ նիստ
գումարել յառաջիկայ ուրբաթ
օր :
Յետոյ ժողովն օրակարգին
անցնելով , կրօն. ժողովոյ Համա-
րատուութեան վիճարանութիւնը
ձեռք առաւ և մէկ ժամէ աւել-
ի խօսելով այս խնդրոյն վրայ ,
վիճարանութիւնը փակեց , դո-
հունակութիւն յայտնելով առ
կրօն. ժողովն որ խօսուացաւ ե-
րեսփոխանաց ինչ ինչ դիտողու-
թիւնները գործադրել իւր շրջա-
նին մնացած մասին մէջ :
Ատենանը փակեցաւ ի ժամ 6 ,
52 երեսփոխանք և 200 ի չափ

ունկնդիրք ներկայ էին :
Տեղեկացանք որ կաթողիկո-
սական խնդրոյն աւթիւ կրօն.
ժողովոյ պատրաստած Բանաձեւը
կրօն. ժողովէն ստորագրեալ չէ
եղեր . այլ ատենապետ Գեր. Խո-
րէն սրբազան կրօն. ժողովոյ մէջ
զայն խմբագրեր եւ խառն ժողո-
վոյ տարեր է :
Ամեն Ս. Պատրիարք Հայրը
յառաջիկայ երկուշաբթի օր նոր-
ընտիր նախարարաց շնորհաւո-
րութեան պիտի երթայ :
Պրուսայի Առաջնորդ Գեր.
Տ. Բարթողիմէոս Ս. Արքեպիս-
կոպոս անցեալ կիրակի օր իւր
փոխանորդ Արժ. Տ. Արիստակէս
Ծ. վարդապետի յատուկ պա-
տարագ եւ պաշտօն մատուցա-
նել տուեր է Հոգելոյս Տ. Տ. Ե-
սայի Սրբազանի հոգւոյն համար ,
եւ այս աւթիւ իմաստալից քա-
րող մը խօսեր է Հանգուցելոյն
կենաց եւ գործոց վրայ : Պօյոն-

ցի բաղմաթիւ աղագայինք ներկայ
դռնուեր են սոյն հանդիսին :
—
ՔԵՐԱԿԱՆ
ԿԱՄ
ՄԱՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ
Բոլորովին նոր ոճով
Ն. Տպագրութիւն Պատկերազարդ
Գին 10 փարայ

ԸՆԹԵՐՑՍՐԱՆ
ԿԱՄ
ՍԻՐՈՒՆ ՉԲՕՍԱՐԱՆ
—
Մանկանց երկրորդ գիրքը
56 գեղեցիկ պատկերներով
զարդարուած
Սոյն դասագիրքը ասկէց առաջ
հրատարակեալ ՔԵՐԱԿԱՆ կամ ՄԱՆ-
ԿԱՆՑ ԳԻՐՔԻՆ Բ. մասն է . և կը պա-
րունակէ մանկական երգեր , կարճ
հատուածներ , առածներ , առակներ
և փոքր պատմութիւններ :
Գինն 2 դահեկան :
Կը վաճառի Մարդարան գրա-
տունը , Մերձան փողոց : Գարոցաց
համար 0/0 15 դեղչ կը լինի :

— Գիտէք թէ ո՛ւր գացած է , հարցուց նա :
— Ամենեւին չեմք գիտեր :
— Ըսած չէ՞ ձեզի թէ քանի՞ օր բացակայ պիտի
մնայ :
— Ոչ , բայց կը կարծենք թէ , քիչ ժամանակէն
Բարիզ չը պիտի վերադառնայ , երբ իւր հաշիւը կը
կարգադրէր , սաստիկ տրտում կ'երեւէր . թերեւս
չէր սպասեր այսչափ աճապարանօք մեկնիլ : Իւր
նամակները հոս չէին զրկեր , բայց , իրեն Բարիզէն
մեկնիլ հրամայող հեռագիր մը առած ըլլալու է :
Ասկէ աւելի բան մը չունինք ձեզի իմացնելու :
Ասկէ զատ , այդ պարոնին գործերուն վրայ անդե-
կութիւն չունինք , սրովհետեւ մեր սովորական յա-
ճախորդներէն չէ , կալրիէլ հեռացաւ Վիորադուլս
և ծանրաթախիծ : Այն ատեն միայն զգաց իւր յան-
ցանքին դիտակցութիւնը : Իւր առջեւ կանգնած
տեսնելով սոսկալի իրականութիւնը , թուեցաւ իրեն
թէ երազէ մը կ'արթնար : Ճառագայթումէ վերջը :
մթին մտածումներ , լոյսէն վերջը մթութիւնը :
Մեկնած , այս ահարկու բառը , կարծես թէ
իւր բոցակէզ ճակտին վրայ հրեղէն գրերով դըր-
ւագուած էր . . .
— Խտրուած , խտրուած , զիս խաբեր է , կը
կրկնէր նա , տրագապէս իջնելով Ռիչիլէօ փողոցէն :
Ես , սիրտս , կեանքս , ամեն բան անոր յանձնած
էի և նա՛ վատաբար զիս լքած է :
Գեւ զղոցած չէր , բայց արդէն կսկծագին կը
ցուէր : Կը նախատեսէր այն անդունդը ուր՝ դատա-

Մինակ երիտասարդը կը խօսէր , բայց նա ա
մտիկ կընէր : Անոր լեզուն համանման էր բոլոր
պատրոզաց լեզուին : Անոր՝ իրեն ազգած ան-
կեղծ և խորին սիրոյ վրայ խօսեցաւ : Երբէք սիրած
չէր , ինք էր որ առաջին մանկամարդուհին բաղմու-
թեան մէջէն զատած էր : Իրմէ յառաջ և ոչ մին իւր
միտքը զբաղեցուցած չէր : Եւ այս ամենը խանդա-
կաթ խօսքերով ըսուած էր , որոնք մինչեւ կալրիէլի
սրտին խորը կը յուզէին :
Կալրիէլ , ապշեալ , յափշտակեալ , թովեալ ,
անկարող էր իւր դատողութեան վերջին կոչում մը
ընելու : Երիտասարդը կ'զգար թէ նա կը դողդո-
ջէր , կը լսէր անոր հեւալը և անոր խռովութիւնը
կը գուշակէր :
— Ինչո՞ւ համար ինձ չէք պատասխաներ , կրկնեց
նա : Կալրիէլ , չէք կարող ձեր զգացածը ինձմէ
պահել , զձեզ սիրածիս պէս դուք ալ զիս կը սիրէք ,
դիտեմ :
Կալրիէլ դողաց և սկսաւ աւելի զօրաւոր կերպիւ
դողդոջել : Նա՛ պնդեց և վերջապէս անոր պատաս-
խանեց .
— Այո , կը սիրեմ զձեզ :
Երիտասարդը համբոյր մը դրաւ անոր ճակտին
վրայ :
Այս համբոյրը , իւր բոլոր էութեան մէջ անցնող
բոցի պէս բան մ'եղաւ :
Կալրիէլ կորսուած էր :
Զայն՝ մինչեւ իւր դրան առջեւ բերաւ և հետեւ-

ՀԱՅ ՎԱՃԱՍՈՒՍՏՈՒՆ

ՆՊԱՐԵՂԻՆՍՑ

Կ. Պօլիս Թահմիզ Էօնիս փողոց քի. 59

ճիշդ դիմ առ դիմ աղբիւրին

(Հաստատեալ 1. օգոստոս 1885)

Շատեր ազնիւ մերազնեից՝ մի քանի ձախող ձեռնարկունե- րու անյաջողութեան վրայ, ի- րենց հաստատ կարծիք շինած էին թէ, Հայը այս տեսակ գործ չկրնար յառաջ տանիլ, այլ մի- այն օտարն է ընդունակ:

Այս թիւը կարծիք ջնջելու հա- մար, վաճառատանս հաստատ- մանէն ցայս օր անցած ժամանա- կամիջոցը բաւական ապահովե- ռաշխիք մը լինելով, յուսալից եմ թէ սիրելի ազգայնոցս կողմանէ քան զառաջինն տուաւել համա- կիր ընդունելութիւն վայելելու բախտաւորութիւն պիտի ունե- նամ:

Վաճառատանս մէջ կը ծախուի նպարեղէնի վերաբերեալ ամեն տեսակ ընտիր ապրանք՝ փոքր

թէ մեծ քանակութեամբ, « Եր- ան քննիչ » և թէ երաշխաւորեալ վճարմունք կԱՆՍԻԿ են:

Մեքոն Տեօփէեանց

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՅԵՏՈՄՈՒ

Հաւազոյն քառթօնի վրայ ամէն լեզուաւ կը պատրաստուի ի գին 100 հատը 10 դէկ. պէտք ունեցողները պէտք է գիմեն յԱրամեան տպարան, Յակոբեան խան 13 կ. Պօլիս:

— օ —

ԹՂԹԱՎԱՅԱՌ—ԳՐԱՎԱՃԱՌ

Ձ. ԹՈՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ի- րենց վաճառատան մէջ Պահճէ- Գարու մեծ մաքսի կարգ թիւ 46 ֆրանս. Հայ. ամեն տեսակ գրքեր, այլ և այլ Աղլաններ, զպրոցական ամեն տեսակ պի- տոյք, նորելուի գրիչներ և քա- նակներ. վաճառատան վերա- բերեալ տետրակներ և թղթե- ղէնք, ընտիր սիկառի թղթեր, ժօպ. հոտաւէտ Վերսիլեաներ

կը վաճառուին խիստ աժան գի- ներով, Ֆրանս. գրքերու մա- սին յանձնարարութիւնք փու- թով կը կատարուին:

Գործածուած գրեանք և «թէմպ-ը-փօսթ» կը գնուին: Վաճառմունք միշտ կանխիկ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱՌՈՏ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ
Յօրինեաց
ԽՈՐԷՆ Վ. ԳԱԲՐ. ԱՇԸԽԵԱՆՅ

Հրամանաւ հեղինակին Տ. Խորէնայ Եպիսկոպոս Հ. Վ. Արմաշու

Հասարակաց կրթութեան պաշտօնէին վաւերացմամբ

Երկրորդ տպագրութիւն

Ի Նիկոմիդա
Ի տպարանի Չ. Ս. Աստուածածնի վանացն 1884

Տրամաբանութեան համառօտ այս դասագիրքը՝ որ 1871 թուականին տպագրուած է՝ ազգային վարժարա- նաց մէջ կարեւոր սէտք մը լեցնելու գործածուելով՝ սպասած և շատ տե- ղերէ խնդրուած էր: Հեղինակը, Արմաշու վանահայր Գեր. Խորէն սըր-

աղան, վերստին այժէ անցնի տպագրել տուած է:

Կը գտնուի գրավանատանց Գինն է (6) վեց դահեկան:

ՀԱՅ ԹԷՅՈՎԱՃԱՌ

Թահմիզ փողոց, աղբիւրին մոտ թիւ 70

Այս վաճառատունն՝ որ տարիէ աւելի ժամանակէ իւր յաճախորդները գոհացու- լու ջանք չէ խնայած, ինչպէս նուցանէ թէ ջինաստանի վայել բերքերէն այս անգամ նազան տեսակ (չայ) բերքե- ւած է յատկապէս, և կը ըն- րէ սիրելի ազգայններէ, ինչ- անդ գաւառացի Հայ բո- յոններէ որպէս զի հաճին մի անգամ ի մօտոյ տեսնել ապրանքներն և փորձել թէ սակայ լաւութիւնը, և թէ ներու աժանութիւնը:

ՏԷՐ—ԽՍԲԱՌ
Մ. Յ. ՄԷՂԻՍ

եալ օրուան համար ժամագրութիւն ընելով իրարմէ զատուեցան:

Այսպէս երեք ամիս, կալրիէլ արեւոյթեան և իւր վրայ ճառագայթող սիրոյ շացման մէջ ապրեցաւ:

Պ. Օգթավ լօնկէ, — այս է պատրուկին ինքնա- կոչ անունը — դատելով իւր անգործ կեանքէն և ըրած ծախքերէն, պարտէր հարուստ լինիլ: Բայց կալրիէլ բնաւ չէր գիտեր թէ ինչ վիճակ ունէր ընկերութեան մէջ: Նա՛ անոր հարցներու համար- ձակութիւն մը չունեցաւ: Նմանապէս, ասիորա- բար Բարիդ բնակիլն ալ չէր գիտեր: Այս մասին կրնար կասկածիլ, վասն զի առ ժամանակեայ կեր- պիւ Ռիչլիէօ փողոցի պանդոկներէն միոյն մէջ երեք սենեակէ բաղկացեալ յարկ մը կը բնակէր:

Պ. Օգթավ, սակէց զատ խիստ առատաձեռնու- թեամբ, ուզեց անոր հանդերձեղեններ և գոհա- րեղեններ տալ: Նա՛ շնորհակալ եղաւ անոր բարի գիտաւորութեանց համար, բայց բացարձակապէս մերժեց ինչ որ պիտի ընծայէր նա:

Փափաք յայտնած էր, որ կալրիէլ իւր անպա- ճոյճ սենեակը թողու, ուր շատ գէշ վիճակի մէջ էր նա, առաջարկեց իրեն աւելի վայելուչ սենեակ մը վարձել և կահաւորել: Նա՛ դարձեալ մերժեց:

Կալրիէլ ինկած, իւր սրտովը մատնուած էր, բայց իւր հպարտութեան զգացումը կորսնցուցած չէր: Այս զգացումով ներշնչեալ, իւր սիրահարէն ո և է բան մը, նոյն իսկ ընծայի ձեւով ընդունիլ, սիրոյ պղծում կը համարէր:

—Ո՛հ, կ'ըսէր անոր նա, ամեն անգամ որ իրեն առատաձեռն գտնուիլ ուզէր, ոչ, վերջը երբ ձեր կինը լինիմ:

Երիտասարդը այս խոստումը ըրած էր անոր: Անմեղ աղջիկը չէր կարող կասկածիլ անոր խօսքերէն: Երբ մարդ մէկը կը սիրէ, ամեն բանի կը հաւատայ: Պատրանաց փարատման ժամը եկաւ:

Օր մը, կալրիէլ ի զուր սպասեց Պ. Օգթավին այն տեղ, ուր զինքը գտնուելու պիտի գար:

—Անակնկալ գործ մը արդիւած է զայն հոս դա- լու, խորհեցաւ նա, վաղը ինձ նամակ կը գրէ:

Յուսացուած և փափաքուած նամակը չեկաւ: Երրորդ օրը, մտատանջութենէ կը փարատուէր նա:

—Աստուած իմ, կ'ըսէր ինքնիրեն, ինչ եղած է ուրեմն անոր: Ո՛հ, թերեւս ծանր կերպիւ հիւ- անդ է:

Ինքզինքը բռնադատելով, երկու օր եւս սպասե- լու քաջութիւն ունեցաւ: Բայց այլ եւս, զինքը մեռցնող այսպիսի անստուգութեան մէջ մնալ կա- ըրի չէր:

Նա՛ անոր բնակած պանդոկը գնաց: —Պ. Օգթավ լօնկէ ութ օրէ ի վեր մեկնած է, պատասխանեցին իրեն:

Մեկնած, այս բառը լախտի հարուածի մը պէս ճիշդ իւր սրտին զարկաւ: Տժգունեցաւ, ամպ մը անցաւ իւր աչացը առջեւէն, սրունքները սկսան կքել: Կարծեց թէ պիտի իյնար, Բայց, իսկոյն ին- քզինքը սեղմելով կրցաւ զսպել իւր վիշտը: